ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ «ՓՆՏՐՈՒՔՆԵՐԸ» ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԻ ՄԻՋԵՎ 1918Թ.

ՄՀԵՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Խորհրդային տարիներին անաչառ ուսումնասիրության չենթարկված բազմաթիվ հարցերի կողքին իր ուրույն տեղն է զբաղեցնում նաև 1917-1918թթ. ընթացքում Դաշնակցության և բոլշևիկների միջև տեղի ունեցած հարաբերությունների պատմությունը: Այդ բացը լրացնելու համար առավել քան դրական պայմաններ ստեղծվեցին Հայաստանի Հանրապետության անկախությունից հետո, երբ նախկինում քողարկված շատ արխիվային նյութեր հասու դարձան ուսումնասիրողների համար: Վերոհիշյալ թեմայից առանձնացնենք երկու քաղաքական ուժերի ներկայացուցիչների միջև Մոսկվայում և Բեռլինում 1918թ. տեղի ունեցած բանակցությունների պատմությունը, որն էլ կփորձենք հնարավորինս ամբողջական ներկայացնել:

Մոսկվյան բանակցությունների «մեկնարկը տրվում է» ոչ թե Մոսկվայում, այլ Ս. Պետերբուրգում՝ հոկտեմբերյան հեղափոխությունից անմիջապես հետո: Սակայն մինչ այդ հայության ինքնապաշտպանության հարցերի շուրջ Դաշնակցությունը բանակցություններ էր սկսել նաև Ռուսաստանի ժամանակավոր կառավարության հետ, որի տապալումից հետո դաշնակցականներ Լ. Նազարյանցը և Հ. Ջավրիևը համանման բովանդակությամբ բանակցություններ են սկսում արդեն բոլշևիկյան կառավարության ներկայացուցիչների՝ մասնավորապես Լ. Տրոցկու հետ:[1] Դրան զուգահեռ կողմերի միջև համագործակցության նշույլներ էին երևում Բրեստ-Լիտովսկում ընթացող բանակցություններին հայկական հարցը պատշաճ ներկայացնելու գործում. « Երբ խորհրդային իշխանութիւնը առաջին անգամ պատուիրակութիւն կուղարկէր հոն,- հիշում է Լ. Նազարյանցը,- նկատի ունենալով, որ հայկական հարցն ալ քննութեան առարկայ պիտի լինէր, Վահան Տէրեանը, իբրև հայ, նոյնպէս առնուեցաւ այդ պատուիրակութեան մէջ: Տէրեանը դիմեց մեզ՝ խնդրելով տալ իրեն պէտք եղած նիւթերը և ցուցումները...»:[2] Բրեստ-Լիտովսկի բանակցությունների հետ կապված Դաշնակցության հույսերը չարդարացան և խորհրդային պատվիրակությունը ստորագրեց մի պայմանագիր, որը չէր բխում հայության շահերից: Հասկանալով բոլշևիկյան կառավարության թույլ տված «սխալը»՝ Լ. Տրոցկին ոչ այնքան քողարկում էր, որքան փորձում էր արդարանալ. «Այո՛, ընկեր Լ., դժբախտաբար ամէն ինչ այնպէս չի կարգադրուիր, ինչպէս որ մարդ կը փափագի: Ես ինքզինքս կը դնեմ ձեր դրութեան մէջ. Բրեստի դաշնագիրը դժբախտութիւն մըն է ձեր ժողովուրդին համար, ու ես երջանիկ եմ, որ ինձի չվիճակեցաւ ստորագրել այն: Հաւատացէք, որ ես միշտ պատրաստ եմ օգնելու ձեզ, ինչով որ կարող եմ»:[3] Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագրի կնքումից հետո Դաշնակցության Թիֆլիսի թևը ավելի գերմանամետ կողմնորոշում է բռնում և փորձում ստանալ կայսրության օժանդակությունը: Ինչևիցե, Լ. Նազարյանցը, որը, դատելով իր իսկ խոսքերից, նախընտրել էր Տրոցկու միջոցով լուծել բոլոր

խնդիրները, հենց վերջինիս հետ էլ 1918թ. սկզբին տեղափոխվում է Մոսկվա:[4] Այստեղ է, որ 1918թ. գարնանը՝ հավանաբար մարտին,[5] Լ. Նազարյանցը հայկական շրջանները թուրքական զորքերից պաշտպանելու նպատակով փորձում է Խորհրդային Ռուսաստանի կառավարությունից բոլշևիկների համար իսկական պատուհաս դարձած մոտ 45.000-ոց չեխոսլովակական զորագունդը Ռուսաստանից Անդրկովկաս տեղափոխելու թույլտվություն ստանալ, որում Լ. Տրոցկին իր պասիվ «օժանդակությունն» էր ցուցաբերում: [6] Լ. Նազարյանցը նշում է, որ Տրոցկու հետ չեխերի հարցի շուրջ բանակցելուց մի քանի օր հետո մեկնել է Բեռլին: Համաձայն արխիվային մի փաստաթղթի՝ Լ. Նազարյանցը Բեռլին է ուղևորվել 1918թ. ապրիլի 7-ին:[7] Ստացվում է, որ չեխերի հարցը քննարկվել է մարտի վերջերին: 1918թ. մարտի 26-ին Չեխոսլովակիայի, Ֆրանսիայի և Խորհրդային Ռուսաստանի միջև համաձայնություն է կնքվել այս հարցի կապակցությամբ ու որոշվել չեխական զինված ուժերը Վլադիվոստոկով տեղափոխել ֆրանս-գերմանական ճակատ: [8] Այն հանգամանքը, որ բոլշևիկյան ղեկավարությունը այդ բազմահազարանոց զորաբանակը բաժանում է 4 մասի և իրարից բավականին մեծ հեռավորության վրա պահելով փորձում է նրանց «եվրոպական Ռուսաստանը» շրջանցող արևելյան ճանապարհով ֆրանս-գերմանական ճակատ «հասցնել»՝[9] խոսում է այն մասին, որ բոլշևիկներին ամենաշատը հուզում էր այդ «ժամանակավոր դաշնակիցներին»՝ հնարավորինս արագ ու անարգել տեղափոխումը, քան թե հայկական կողմին օգնելը:

Լ. Նազարյանցի և Լ. Տրոցկու միջև ձևավորված լավ հարաբերությունները իրենց դրական դերն ունեցան նաև 1918թ. մարտի վերջերին Թիֆլիսից Մոսկվա ժամանած հայկական պատվիրակության հետ հարաբերությունների հաստատման ընթացքում: Թիֆլիսի Հայոց Ազգային խորհուրդը 1918թ. գարնանը Բեռլին է գործուղում մի պատվիրակություն, որի նպատակն էր գերմանական կողմի հետ բանակցություններ վարելով՝ ստանալ վերջինիս օժանդակությունը հայկական տարածքների հետագա ճակատագրի շուրջ ծավալվող գործընթացում: Պատվիրակության կազմի մեջ մտնում էին դաշնակցականներ Արշակ Ջամալյանը, Լիպարիտ Նազարյանցը և կադետ Գևորգ Մելիք-Ղարագյոզյանը: [10] Վերջիններս Մոսկվա են ուղևորվում սահմանը անցնելու հետ կապված փաստաթղթային խնդիրները լուծելու համար: Մոսկվայում այս պատվիրակության ծավալած գործունեության մասին են վկայում արխիվային երկու նյութ: Դրանցից մեկը հուշերի ձեռագիր նոթատետր է՝ գրված Գ. Մելիք-Ղարագյոզյանի կողմից, որտեղ հեղինակը մոսկովյան օրերի մասին ընդամենը մի քանի էջով թռուցիկ անդրադարձ է կատարել:[11] Մյուս նյութը Արշակ Ջամալյանի՝ 1918թ. մարտի 28-ին Ավետիք Շահխաթունյանին ուղարկած նամակն է, որտեղ ավելի հստակ է ներկայացված մոսկովյան հանդիպումների բովանդակությունը:[12] Գ. Մելիք-Ղարագյոզյանը նշում է, որ Մոսկվայում եղած առաջին օրերին ինքը հանդիպումներ է ունեցել տեղի կադետական ներկայացուցիչների հետ, իսկ այնուհետև ավելացնում, որ Բեռլին մեկնելու հարցում նրան մեծապես օգնություն են ցուցաբերել Տրոցկին և Կարախանը: [13] Նա նաև նշում է, որ խմբագրելու համար իրենց է հանձնվել 1918թ. մարտի 31-ին /ապրիլի 13-ին/ Ռուսաստանի արտաքին գործերի ժողկոմատի կողմից պատրաստված հուշագիրը՝ ուղղված գերմանական իշխանություններին: [14] Իր

հերթին Ա. Ջամալյանը գրում է, որ Թերզիբաշյանի հետ միասին Տրոցկու և Կարախանի հետ հանդիպումների ժամանակ Գերմանիա մեկնելու հարցում կարողանում են ստանալ բոլշևիկյան կողմի աջակցությունը:[15] Վերը նշվածից, սակայն, տպավորություն է ստեղծվում, որ թե՛ Գ. Մելիք-Ղարագյոզյանը, թե՛ Արշակ Ջամալյանը առանձին-առանձին են հանդիպել բոլշևիկ պաշտոնյաների հետ, քանի որ բոլշևիկների հետ հանդիպման մանրամասները ներկայացնելիս՝ նրանցից ոչ մեկը մյուսի անունը չի հիշատակում: Այն հանգամանքը, որ Ջամալյանը մի քանի օր ավելի շուտ էր Մոսկվա ճանապարհ ընկել, քան Մելիք-Ղարագյոզյանը, և այն, որ Ջամալյանի հետ զրույցի ընթացքում Տրոցկին և Կարախանը տեղյակ էլ չէին հայ պատվիրակի Բեռլին մեկնելու նպատակի մասին, թույլ է տալիս եզրակացնել, որ Մելիք-Ղարագյոզյանը Մոսկվա է հասել այն ժամանակ, երբ Բեռլին մեկնելու խնդիրը արդեն դրական լուծում էր ստացել: Դրանով է, հավանաբար, բացատրվում նաև այն, որ Մելիք-Ղարագյոզյանը Ջամալյանի նման մանրամասնորեն չի ներկայացնում բոլշևիկ պաշտոնյաների հետ հանդիպումները, այլ ընդամենը նշում է, որ նրանք նպաստել են հայ պատվիրակների Բեռլին մեկնելու գործին: Ինչևիցե, ելնելով այս երկու հայ պատվիրակների հիշատակություններից, կարծում ենք, որ նրանց առաջ բոլշևիկյան ղեկավարության հետ բանակցելու խնդիր ի սկզբանե դրված չի եղել, այլ հակառակը՝ Ա. Ջամալյանը դիտմամբ չի ասել Տրոցկուն և Կարախանին Բեռլին մեկնելու իրենց բուն նպատակի մասին, որպեսզի նախ պարզի վերջիններիս դիրքորոշումը Հայկական հարցի վերաբերյալ և ապա զրույցը այնպես է տարել՝ ասես հայ պատվիրակների Բեռլին մեկնելը բոլշևիկյան կողմի նախաձեռնությունն է, որի դեպքում միայն հնարավոր է եղել դյուրացնել Բեռլին մեկնելը: Չնայած հայկական այս պատվիրակությունը բաղկացած չէր զուտ դաշնակցականներից, այնուամենայնիվ, Դաշնակցության ներկայացուցչի շնորհիվ հնարավոր է լինում դրական լուծում տալ այդ հարցին: Ակնհայտ էր, որ բոլշևիկ պաշտոնյաներին ոչ այնքան հուզում էր հայության ճակատագիրը, որքան այն հանգամանքը, որ հայկական պատվիրակությունը հարմար խոսնակ էր Գերմանիայում՝ և ընդհանրապես Եվրոպայի առաջատար երկրներում, բոլշևիկների համար այնքան անշահավետ Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագրի դեմ բողոքը ևս մեկ անգամ բարձրաձայնելու հարցում: Ինչպես Լ. Նազարյանցի ու Տրոցկու միջև ընթացած բանակցությունների դեպքում, այստեղ ևս ակնհայտ էր, որ թե՛ բոլշևիկյան, թե՛ դաշնակցական գործիչները հավատարիմ էին մնում Անդրկովկասում իրենց քաղաքական ուժերի միջև ձևավորված փոխշահավետության սկզբունքներին: Բոլշևիկների դրական վերաբերմունքը թելադրված էր նաև նրանով, որ Դաշնակցությունը Անդրկովկասում՝ մասնավորապես Բաքվում, շարունակում էր աջակցել բոլշևիկյան ուժերին:

1918թ. ապրիլի վերջին Բաքվի Հայոց Ազգային խորհուրդը Մոսկվա է գործուղում դաշնակցականներ Ռուբեն Դարբինյանին /Արտաշես Չիլինգարյան/ և Սիմոն Հակոբյանին: [16] Հայ պատվիրակները արդեն մայիսի կեսերին հասնում են Մոսկվա, որտեղ նրանց սկզբից միանում է Հ. Ջավրիևը /մայիսի 27-ին/,[17] իսկ որոշ ժամանակ անց /մոտ հունիսի երկրորդ կեսին/՝ Բեռլինից վերադարձած Լ. Նազարյանցը: Նրանց խնդիրը Մոսկվայից Բաքվի պաշտպանության համար հավելյալ օժանդակություն ստանալն էր: Դեռ

նոր էին Մոսկվայում սկսվել խորհրդային իշխանության ներկայացուցիչների հետ բանակցությունները, երբ 1918թ. հունիսի 16-ին[18] խուզարկության են ենթարկվում Ռ. Դարբինյանը, Ս. Հակոբյանը և Հ. Զավրիևը[19], որից հետո նրանք գրեթե տնային կալանքի մեջ էին գտնվում: Ռ. Դարբինյանը խուզարկման նախաձեռնող է համարում Մոսկվայի մի խումբ հայ բոլշևիկների՝ Վ. Ավանեսովին, Պ. Մակինցյանին, Վ. Տերյանին, որոնք Հայկական կոմիսարիատում ղեկավար պաշտոններն էին զբաղեցնում:[20] Ընդհանրապես պետք է նշել, որ Մոսկվայի հայ բոլշևիկները, ի տարբերություն Բաքվի հայ բոլշևիկների, ավելի վատ էին տրամադրված դաշնակցականների նկատմամբ: Հայ բոլշևիկների նման անհանդուրժողական վերաբերմունքը, հավանաբար, պայմանավորված էր նրանով, որ դաշնակցականներին դիտում էին որպես իրենց անմիջական հակառակորդների: Խուզարկությունից առաջ՝ հունիսի սկզբին, հայ պատվիրակների նախաձեռնությամբ Մոսկվայում հիմնվում է Քաղաքական խորհուրդ անունով մի կառույց: Դրա նպատակն էր համախմբել Մոսկվայի հայ կարող ուժերին՝ հայությանը ցուցաբերվելիք օգնությունը արդյունավետ կազմակերպելու համար: [21] Խոսելով Քաղաքական խորհրդի անդրանիկ նիստի մասին՝ Ռ. Դարբինյանը գրում է. «Որոշուեցաւ, որ բժ. Զաւերանն եւ ես փորձէինք յարաբերութիւններ մշակել Գերմանիոյ եւ Պուլկարիոյ դեսպաններուն հետ, որոնք այն ատեն կը գտնուէին Մոսկուա, իսկ Սիմ. Յակոբեանը կապեր պիտի պահէր բոլշեւիկներու եւ մասնաւորապէս Կարախանի հետ...

Կարախանը սկիզբները չափազանց սիրալիր էր Սիմ. Յակոբեանի հետ եւ շատ քաջալերական բաներ էր ըսած անոր».[22] 1918թ. հունիսի 16-ին Չեկայի քննիչների կողմից բռնագրավված Հ. Զավրիևի նամակներից մեկում խոսվում է Սևունյան կեղծանվան տակ հանդես եկող մի բոլշևիկի մասին, որը խորհրդահայ պատմագրության մեջ եղած կարծիքի համաձայն՝ Ի. Ստալինն է կամ Լ. Տրոցկին: [23] Մեր կարծիքով, չի բացառվում, որ այդ անձը Լ. Կարախանը եղած լիներ: Այս տեսակետի վերաբերյալ դատողությունները կանենք ստորև: Սևունյանի հետ վարած բանակցության մասին Հ. Զավրիևը գրում է, որ իրենք Սիմոն Հակոբյանի միջոցով բավականին բարեկամական հարաբերություններ են հաստատել Սևունյանի հետ և վերջինիս հավաստիացնելով հայկական կողմի «բոլշևիկամետ» դիրքորոշման մեջ՝ խնդրել են աջակցել խորհրդային կառավարության օժանդակությունը ստանալու հարցում:[24] Սևունյանը չնայած խոստանում է աջակցել, սակայն ավելացնում է, որ ինքը շատ հարցերում պետք է խորհրդակցի ընկերների հետ, որոնք էլ վերջնական որոշում պետք է կայացնեն:[25] Տրամաբանորեն, կարծեք թե, Սևունյան կեղծանվան տակ ներկայացված անձը Ստալինը կամ Տրոցկին պետք է որ լինեին, սակայն որոշ հանգամանքներ այլ բան են մատնանշում: Նախ թե՛ Ռ. Դարբինյանը, թե՛ Հ. Զավրիևը նշում են, որ Ս. Հակոբյանը[26] բոլշևիկներից շատ ավելի մտերիմ էր Լ. Կարախանի հետ: Տրոցկու հետ էլ բավականին լավ հարաբերություններ ուներ Լ. Նազարյանցը, ինչի մասին փաստում է նաև Ռ. Դարբինյանը:[27] Ստացվում է, որ եթե հայ պատվիրակները Ս. Հակոբյանի միջոցով են ծանոթացել Սևունյանի հետ, ապա պետք է որ դա Լ. Կարախանը լիներ: Դրա օգտին է խոսում նաև հաջորդ հանգամանքը: Հ. Զավրիևի նամակների վերաբերյալ զեկույցում, որը պատրաստվել էր Չեկայի աշխատակիցների կողմից, ուղղակի նշվում է, որ այն մարդը՝ այսինքն Սևունյանը, որը խոստացել է

դաշնակցականների նկատմամբ բոլշևիկների սկսած հալածանքներին վերջ տալու համար քայլեր ձեռնարկել՝ Արտաքին գործերի կոմիսարիատի ներկայացուցիչ է:[28] Իսկ նման պաշտոն նշված բոլշևիկներից միայն Լ. Կարախանն էր զբաղեցնում: Եվ վերջում, Սևունյան կեղծանունը ավելի շատ նման է հենց հայազգի բոլշևիկի ազգանվանը՝ Կարախան: Նշենք նաև, որ այս բանակցությունը ուղղակի ծանուցողական բնույթ էր կրում, քանի որ Սևունյանը ընդգծում էր, թե հարցի լուծումը կարող են տալ միայն իր ընկերները: Կողմերը պայմանավորվում են հանդիպել հուլիսի 1-ին: Չնայած նշված օրը հանդիպում չի կայանում, այնուամենայնիվ, Դաշնակցության ներկայացուցիչները շարունակում են բոլշևիկ ղեկավարների հետ շփման եզրեր հաստատելու փորձեր կատարել: Հայ պատվիրակները, երբ նկատում են, որ Մոսկվայի Հայկական կոմիսարիատի ջանքերի շնորհիվ Կարախանը վերապահորեն է մոտենում իրենց հետ քննարկված հարցերին, որոշում են դիմել Լ. Տրոցկուն, որպեսզի վերջինս նախատեսված հանդիպումը կազմակերպի:[29] Սակայն Լ. Նազարյանցին հասցեագրված նամակում Լ. Տրոցկին «խոստովանում» է, որ հանդիպման ձախողման հիմնական մեղավորները հայ բոլշևիկներն են և ինքը ոչինչ անել չի կարող:[30] 1918թ. օգոստոսի 27-ին, շնորհիվ բոլշևիկ Սահակ Տեր-Գաբրիելյանի, մի նոր հանդիպում է նշանակվում երկու կողմերի՝ նախօրոք կազմավորված պատվիրակությունների միջև, որը ևս ձախողվում է նույն սցենարով: Համաձայնության սեղանի շուրջ նստելու հույսը հաստատապես մարում է, երբ հայտնի է դառնում, որ Ստ. Շահումյանն ու մի խումբ բոլշևիկներ ձերբակալվել են: Քանի որ սկզբնական շրջանում այդ տեղեկությունները կցկտուր էին և հայտնի չէր, թե ովքեր են ձերբակալողները, բոլշևիկյան կառավարության հրահանգով 1918թ. օգոստոսի 29-ին ձերբակալում են Հ. Ջավրիևին ու Լ. Նազարյանցին: Նախատեսվում էր նրանց փոխանակել Ստ. Շահումյանի և մնացած ձերբակալված բոլշևիկների հետ[31], սակայն երբ մի քանի ամիս հետո հայտնի է դառնում, որ Դաշնակցությունը բոլշևիկների ձերբակալության հեղինակը չէ, վերը նշված երկու դաշնակցականներին ազատ են արձակում: [32]

Մոսկվյան բանակցություններին զրեթե զուգահեռ / 1918թ. հունիսի սկզբից -նոյեմբերի սկիզբ/ Բեռլինում հայկական պատվիրակության /Համազասպ Օհանջանյան և Արշակ Զուրաբյան/ ու Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչ Ադոլֆ Իոֆֆեի միջև ևս բանակցություններ էին ընթանում: Դրանց ընթացքում հայկական պատվիրակությունը՝ մասնավորապես դաշնակցական Հ. Օհանջանյանը, հիմնականում դնում էր ՀՀ անկախության ճանաչման խնդիրը: Ա. Իոֆֆեից տեղեկանալով, որ Գերմանիայի և Խորհրդային Ռուսաստանի միջև նախատեսվում է Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագրին կից հավելյալ պայմանագիր ստորագրել, հայ պատվիրակները ակտիվորեն սկսում են բանակցել վերջինիս հետ ՀՀ անկախության ճանաչման հարցի վերաբերյալ:1918թ. օգոստոսի 6-ին[33] /Արշակ Զուրաբյանի կողմից/, 10-ին [34], 19-ին [35], 27-ին [36] /Համո Օհանջանյանի կողմից/ Կ.Պոլիս հղած նամակ-զեկույցներում նշվում է, որ Ա. Իոֆֆեի հետ բանակցություններում բարձրացվել է Խորհրդային Ռուսաստանի կողմից Հայաստանի Հանրապետության անկախության ճանաչման հարցը, որի վերաբերյալ բոլշևիկ դիվանագետը խոստացել է հաղորդել Մոսկվա: Պետք է նշել, որ Ա. Իոֆֆեի կողմից, դատելով մեր ձեռքի տակ եղած նյութերից, հայ պատվիրակների հետ բանակցությունների

ընթացքում արված մի շարք մեկնաբանություններ և քայլեր անձնական բնույթ են կրել: Այսպես, 1918թ. սեպտեմբերի 13-ին Հ. Օհանջանյանի գրած նամակից տեղեկանում ենք, որ երբ նա Վիեննայում Ավստրո-Հունգարիայի արտաքին գործերի նախարարի օգնականներից մեկի՝ կոմս Ամբրոզիի հետ հանդիպման ժամանակ հայտնում է, որ Ա. Իոֆֆեի պնդմամբ Խորհրդային Ռուսաստանը ամենայն հավանականությամբ կճանաչի ՀՀ անկախությունը, կոմսը պատասխանում է. «...դա կարող է Յոֆֆեյի անձնական կարծիքը լինել...»:[37] Մեկ այլ դեպքում էլ Ա. Իոֆֆեն, գաղտնիությունը պահպանելու պայմանով, արտագրելու համար Հ. Օհանջանյանին է հանձնում 1918թ. օգոստոսի 27-ին Գերմանիայի և Խորհրդային Ռուսաստանի միջև կնքված հավելյալ պայմանագիրը, այդ թվում նաև՝ պայմանագրին կից ստորագրված գաղտնի համաձայնագրի կետերի վերաբերյալ տվյալները: [38] Ա. Իոֆֆեն ավելի հեռուն է գնում և 1918թ. օգոստոսի 9-ին Թուրքիայի պատվիրակի հետ հանդիպելուց հետո Հ. Օհանջանյանի հետ կրկին քննարկում է Կ. Պոլսում Խորհրդային Ռուսաստանի դեսպանի թեկնածության հարցը՝ առաջարկելով այդ պաշտոնում Ռոստոմի թեկնածությունը:[39] Մինչև հայկական կողմը մտածում էր Ա. Իոֆֆեի առաջարկի վերաբերյալ՝ Մոսկվայում որոշում են Կ. Պոլսում Խորհրդային Ռուսաստանի դեսպան նշանակել ազգությամբ ռուսինացի սոցիալիստ Ռակովսկուն:[40] Կարծում ենք, որ Ա. Իոֆֆեն այն բոլշևիկ քաղաքական գործիչներից էր, որը լավ էր հասկանում, թե ինչքան շահավետ կլինի Խորհրդային Ռուսաստանի համար այդ փուլում Դաշնակցության հետ բարիդրացիական հարաբերություններ հաստատելը: Ուստի, պատահական չէ նաև այն, որ հետագայում էլ՝ մասնավորապես 1921թ. հուլիսի 8-ից մինչև հուլիսի 14-ը, Ռիգայում Դաշնակցության և Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչների միջև կայացած բանակցություններում Ա. Իոֆֆեն ոչ միայն աչքի է ընկնում բանակցությունների նկատմամբ դրական տրամադրվածությամբ, այլ նույնիսկ գլխավորում է խորհրդային պատվիրակությունը:[41] Չնայած 1918թ. սեպտեմբերի 5-ին Հ. Օհանջանյանը իր գրած նամակում հավաստիացնում էր, որ Ա. Իոֆֆեն ընդունում է ՀՀ անկախությունը որպես տեղի ունեցած փաստ,[42] այնուամենայնիվ, հետզհետե այդ կարծիքը սկսում է կերպարանափոխվել: Արդեն 1918թ. սեպտեմբերի 19-ին գրած նամակում Հ. Օհանջանյանը հաղորդում է, որ Իոֆֆեն, Բաքվի հայտնի դեպքերի ազդեցության տակ և դրան հաջորդած Մոսկվայի հրահանգներից հետո, կարծիք է հայտնել, որ Հայաստանին եթե նույնիսկ տրվի էլ անկախության իրավունք, ապա ժամանակավորապես:[43] Իսկ արդեն 1918թ. հոկտեմբերի 1-ին գրած նամակում Հ. Օհանջանյանը վրդովված տեղեկացնում է, որ Իոֆֆեն ընդհանրապես չի ցանկանում Հայաստանի անկախության մասին որևէ բան լսել:[44] Բեռլինում Ա. Իոֆֆեի և հայ պատվիրակների միջև ընթացած բանակցությունները ևս հաջողությամբ չեն ավարտվում: Սակայն, եթե Մոսկվայի բանակցություններում անհաջողության հիմնական պատճառները տեղի հայ բոլշևիկների վարած հակադաշնակցական քաղաքականությունն ու Բաքվից եկած լուրերն էին, ապա Բեռլինյան բանակցություններում դրան գումարվում են նաև Մոսկվայի և Բեռլինի հայ պատվիրակությունների անհամաձայնեցված գործունեությունը, ՀՀ արտաքին գործերի նախարարության կողմից հայկական պատվիրակությունների պահանջները մեկ հիմնական պահանջի չվերածելու բացթողումը և միևնույն պատվիրակության անդամ-

ներ Արշակ Զուրաբյանի /սոցիալ-դեմոկրատ, ինտերնացիոնալիստ[45] /ու դաշնակցական Համո Օհանջանյանի միջև ՀՀ անկախության հարցի շուրջ եղած տարաձայնությունները: Այս բացթողումների մասին է վկայում նաև Հ. Օհանջանյանը:[46]

Ինչևիցե, Անդրկովկասում 1918թ. Դաշնակցության և բոլշևիկների միջև հարաբերությունները և դրան դրական ընթացք տալուն ուղղված մոսկովյան և բեռլինյան բանակցությունները Դաշնակցության համար սպասված արդյունքը չունեցան, քանի որ զուտ փոխադարձ շահի համար իրար հետ համագործակցող կողմերի միջև սկսվում է շահերի հակադրման մի շրջան, որից հետո բոլշևիկյան կողմը կտրուկ փոխում է իր քաղաքականությունը՝ ի վնաս Դաշնակցության:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Մանրամասն տե՛ս Լ. Նազարեանց, Հայ յեղափոխական դաշնակցութեան եւ Խորհրդային իշխանութեան միջեւ համաձայնութեան փորձեր, «Դրօշակ» ամսագիր, N 8-9, Փարիզ, օգոստոս-սեպտեմբեր, 1928, էջ 231:
2. Նույն տեղում, էջ 232:
3. Լ. Նազարեանց,Հայ յեղափոխական ...,«Դրօշակ» ամսագիր, N 8-9, Փարիզ, օգոստոս-սեպտեմբեր,1928, էջ 232:
4. Տե՛ս նույն տեղում:
5. Տե՛ս Ս. Վրացեան, Մեղադրանքներ եւ իրողութիւններ, «Դրօշակ» ամսագիր, N 2, Փարիզ, օգոստոս, 1925, էջ 36:
6. Լ. Նազարեանց,Հայ յեղափոխական ..., «Դրօշակ» ամսագիր, N 8-9, Փարիզ, օգոստոս-սեպտեմբեր, 1928, էջ 232:
7. Տե՛ս ՀԱԱ ֆ. 200, ց. 1, գ. 28, թ. 5:
8. Տե՛ս Թ. Шамбаров, Белогвардейщина, Москва, 2002, с. 114 - http: //www.militera.lib.ru/research/ shambarov1/ 02.html
9. Տե՛ս В. Шамбаров, Белогвардейщина..., с.114- http://www. militera. lib.ru/researc h/shambarov1/02.html
10. Ա. Զամալյանը և Գ. Մելիք-Ղարագյոզյանը Թիֆլիսից Մոսկվա են ուղևորվում համապատասխանաբար 1918թ. փետրվարի 27-ին և մարտի 1-ին, իսկ Լ. Նազարյանցը նրանց արդեն տեղում է միանում- տե՛ս ՀԱԱ ֆ. 200, ց. 1, գ. 28, թ. 4-5:
11. Տե՛ս ՀԱԱ ֆ. 502, ց. 1, գ. 3, թ. 3-5; առկա է նաև նոթատետրի բովանդակություն բաժինը՝ համառոտ վերլուծականով - ՀԱԱ ֆ.222, ց.1, գ.132, թ.1-3:
12. Տե՛ս ՀԱԱ ֆ. 222, ց. 1, գ. 130, թ. 1-3:
13. Տե՛ս ՀԱԱ ֆ. 502, ց. 1, գ. 3, թ. 2-5:
14. Տե՛ս ՀԱԱ ֆ. 222, ց. 1, գ. 132, թ. 1:
15. Մանրամասն տե՛ս ՀԱԱ ֆ. 222, ց. 1, գ. 130, թ. 1-2:
16. Ռ. Դարբինեան, Փոթորիկի օրերուն,«Հայրենիք» ամսագիր, ԻԶ. տարի, թիւ 1/264/, Պոսթըն, յունուար, 1948, էջ 23; նաև Ս. Վրացեան, Մեղադրանքներ եւ ..., «Դրօշակ» ամսագիր, N 2, Փարիզ, օգոստոս, 1925, էջ 36:
17. Տե՛ս ՀԱԱ մասնաճյուղ N 2 ֆ. 1457, ց. 1, գ. 128, թ. 4:

18. Տե՛ս նույն տեղում, թ. 1:
19. Տե՛ս Ռ. Դարբինեան, Փոթորիկի ...,«Հայրենիք» ամսագիր, ԻԶ. տարի, թիւ 1/264/, Պոսթրն, յունուար,1948, էջ 26-28:
20. Տե՛ս նույն տեղում, էջ 26-27:
21. Տե՛ս Ռ. Դարբինեան, Փոթորիկի ...,«Հայրենիք» ամսագիր, ԻԶ. տարի, թիւ 1/264/, Պոսթրն, յունուար, 1948, էջ 28-29:
22. Նույն տեղում, էջ 29:
23. Տե՛ս Լ. Խուրշուդյան, Սովետական Ռուսաստանը և Հայկական հարցը, Երևան, 1977, էջ 177:
24. Տե՛ս ՀԱԱ մասնաճյուղ N 2 ֆ. 1457, ց. 1, գ. 128, թ. 6-7:
25. Տե՛ս նույն տեղում, թ. 7:
26. Համաձայն Ռ. Դարբինյանի հուշերի՝ Ս. Հակոբյանը 1918թ. հունիսին բոլշևիկների կողմից իրենց նկատմամբ կիրառած «ահաբեկումներից» հետո բոլշևիկամետ կողմնորոշում էր որդեգրել և շատ հաճախ Դաշնակցության դիրքերին հակառակ էր հանդես գալիս - տե՛ս Ռ. Դարբինեան, Փոթորիկի...,«Հայրենիք» ամսագիր, ԻԶ. տարի, թիւ 2/265/, Պոսթրն, փետրուար, 1948, էջ 30-32:
27. Տե՛ս Ռ. Դարբինեան, Փոթորիկի ...,«Հայրենիք» ամսագիր, ԻԶ. տարի, թիւ 1/264/, Պոսթրն, յունուար, 1948, էջ 30:
28. Տե՛ս ՀԱԱ մասնաճյուղ N 2 ֆ. 1457, ց. 1, գ. 128, թ. 8:
29. Մանրամասն տե՛ս Ռ. Դարբինեան, Փոթորիկի ...,«Հայրենիք» ամսագիր, ԻԶ. տարի, թիւ 1/264/, Պոսթրն, յունուար, 1948, էջ 30:
30. Մանրամասն տե՛ս Լ. Նազարեանց,Հայ յեղափոխական ..., «Դրօշակ» ամսագիր, N 8-9, Փարիզ, օգոստոս-սեպտեմբեր, 1928, էջ 233:
31. Տե՛ս ՀԱԱ ֆ. 200, ց. 1, գ. 141, թ. 12:
32. Տե՛ս Լ. Նազարեանց,Հայ յեղափոխական ..., «Դրօշակ» ամսագիր, N 8-9, Փարիզ, օգոստոս-սեպտեմբեր,1928, էջ 233:
33. Տե՛ս ՀԱԱ ֆ. 200, ց. 2, գ. 10, թ. 1:
34. Տե՛ս նույն տեղում, թ. 21:
35. Տե՛ս ՀԱԱ ֆ. 222, ց. 1, գ. 135, թ. 2:
36. Տե՛ս ՀԱԱ ֆ. 200, ց. 2, գ. 10, թ. 7:
37. ՀԱԱ ֆ. 200, ց. 2, գ. 11, թ. 15:
38. Տե՛ս ՀԱԱ ֆ. 200, ց. 2, գ. 11, թ. 17-18:
39. Մանրամասն տե՛ս ՀԱԱ ֆ. 200, ց. 2, գ. 10, թ. 22:
40. Տե՛ս ՀԱԱ ֆ. 200, ց. 2, գ. 11, թ. 8:
41. Տե՛ս Ռ. Փիրումեան, Հայաստանը Հ.Յ.Դ.-բոլշեւիկ յարաբերութիւնների ոլորտում /1917-1921/,Երեւան, 1997, էջ 368-369:
42. Տե՛ս ՀԱԱ ֆ. 200, ց. 2, գ. 11, թ. 7-8:
43. Մանրամասն տե՛ս նույն տեղում, թ. 56:
44. Մանրամասն տե՛ս ՀԱԱ ֆ. 200, ց. 2, գ. 11, թ. 73:
45. Տե՛ս ՀԱԱ ֆ. 222, ց. 1, գ. 132, թ. 3:
46. Տե՛ս ՀԱԱ ֆ. 200, ց. 2, գ. 11, թ. 15:

РЕЗЮМЕ

Дипломатические ,,поиски'' между партией Дашнакцуцюн и большевиками в 1918 г.

М. Оганнисян

- В этой статье на основе уже известных и новых источников делается попытка представить полную историю темы ,,Дипломатические ,,поиски'' между партией Дашнакцуцюн и большевиками в 1918 г.''. Анализируя источники и исследования, касающиеся этой проблемы, автор доказывает необходимость этих переговоров и раскрывает истинные причины их провала.

SUMMARY

Diplomatic "Quests" between Dashnaktsytyun Party and Bolsheviks in 1918

M. Hovhannisyan

In this article an attempt is made to present a complete history of the diplomatic "quests" between the Dashnaktsutyun Party and the bolsheviks in 1918 on the basis of well - known and new sources. The analysis research regarding the issue, the necessity of these negotiations and the real causes of their failure are revealed.